15.04.25 - 18.04.25
10:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճ

Ս.թ. ապրիլի 15-18-ը ԵՊՀ-ում կանցկացվի «Իսպաներեն՝ ժամանակի և տարածության մեջ առանց սահմանների լեզու. ավանդույթ, նորարարություն և միջմշակութային երկխոսություն» խորագրով Իսպաներենի դասախոսների եվրոպական ասոցիացիայի (AEPE) միջազգային 28-րդ գիտաժողովը։

Միջոցառումը կմեկնարկի **ս.թ. ապրիլի 15-ին՝ ժամը 10:00-ին, ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում** (այնուհետև կշարունակվի Պալեանների անվան դահլիճում, ապրիլի 16-ին և 18-ին՝ ԵԼՀ ֆակուլտետի կոնֆերանսների դահլիճում)**:**

Իսպաներենի դասախոսների եվրոպական ասոցիացիան աշխարհում իսպաներենի, իսպանական մշակույթի և լեզվի դասավանդման ամենահեղինակավոր ասոցիացիաներից է, որը միավորում է աշխարհի շուրջ 40 երկրների մասնագետների։ Այս տարի ասոցիացիայի գիտաժողովը կանցկացվի ԵՊՀ-ում՝ Ռոմանական բանասիրության ամբիոնի հետ համագործակցությամբ։

Գիտաժողովի ուսումնասիրության առանցքում են ժամանակի և տարածության մեջ իսպաներենի զարգացմանն առնչվող բազմաբնույթ խնդիրները, որտեղ լեզվի հարուստ գրական և մշակութային ժառանգությունն այն հիմնասյունն է, որի շուրջ ներդաշնակորեն միահյուսվում են նորարարություններն ու ավանդույթները։

Գիտաժողովին կմասնակցեն հայաստանյան և եվրոպական երկրների առաջատար բուհերի (Իսպանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Բելգիա, Ռումինիա, Լատվիա, Վրաստան) մասնագետներ՝ քննարկելու իսպաներենի, իսպանախոս երկրների գրականությանն ու մշակույթին առնչվող բազմաբնույթ հարցեր։

Բացման արարողությանը ներկա կլինեն ՀՀ-ում Արգենտինայի Հանրապետության դեսպան Ռաֆայել Գոնսալես Ալեմանը, Դոմինիկյան Հանրապետության դեսպանության ներկայացուցչության գործերի հավատարմատար Սանդրա Սանտանան և ՀՀ-ում Իսպանիայի դեսպանատան գործերի հավատարմատար Քրիստինա Կոնեսան, ինչպես նաև պաշտոնատար այլ անձինք։

Գիտաժողովի ծրագիրը՝ այստեղ։

Այլ մանրամասներ՝ կից։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am